

Ու կու գային մեր հողիններուն առջեւէն անցնելու, լուսերամ հոյերով, Միւթա- նութեանս բոլոր Հայրերը վաղեմի, Միւթա- թարէն Ալիշան. հողեկան կայծեր կը դե- դուին անոնք, մանաւանդ պատանի մեր ժառանգաւորներու սրտերուն մէջ:

Յիշատակ արդարոց օրհնութեամբ ե- ղիցի:

Հոգիներու հանգրուանը

Հաղարտողան նոր քերթուած մը, բա- նաստեղծ Հ. Վահան Վրդ. Յովհաննէս- եանի զրիչէն՝ կու գար բանալ հանգիստ- ւոր թափօրը անդնական խոհերու:

Հողիններու հանգրուանը այն սուրբ վայրն է՝ ուր կը հանդէսն վանքին բոլոր վաստակաւորները երբեմնի. Սուրբ Ղա- զարու գերեզմանատունն է, որ հողերու բանաստեղծին համար տխուր ու տրամա- թախիժ յիշատակներու թատերաբեմը է, այլ հաւատքի բուրաստան մը, վարդա- կարմիր արշալոյսին նման սիրելի. հոն բանաստեղծը կու գայ շրջիլ յաճախ, ծա- դիկներ դարմանել, խօսիլ մեր նախնիք- ներուն հետ, ներշնչուիլ անոնցմէ, խան- դավառուիլ անոնց յիշատակով: Բանա- ստեղծին համար այդ պահը «մեռելոց» է, այլ հայ հողի եւ հայ հաւատքի վարդապետը:

Այս հողեկան թափառումներէն մէկուն ընթացքին է որ բանաստեղծը, Տանթէա- կան երեւակայութեամբ բորբոքուն, կը հանդիպի յանկարծ պատմահայր Չամ- չեանին, խաղաղագէտ Ինճիճեանին, քըր- մահանդերձ Բաղրատունիին, բամբու- հար Ուրիին Հայաստանեայց...: Յուզու- մի զիչեր մը, վերջիչումներ կը փթթին Հիւրմիւլի «Բուրաստանը»էն, Տարօնի նահատակ բանաստեղծի քնարէն...: Կը յայտնուին հուսկ զէմքեր մեզի ծանօթ ու սիրելի... մշտնապէս փէջիկեան վար- դապետը, Ուրուհեան Արբաճայրը մըշ- տաւապիտ:

Բանաստեղծական ողեկոչում Միւթա- թեան վանքի 250ամեայ գործունէութեան, հաւատքի լապտերին տակ:

Քերթուածին ընդհանուր ներկայացու- մը կատարեց Հ. Ներսէս Վրդ. Տէր Ներ- սէսեան. յաջորդաբար, երիտասարդ վար- դապետներ ընտրանքով կարգացին վեց մասեր. Նախերգանք, Նոճիներու ստուե- րին, Նահապետին ձայնը, Միւթիկներու ժպիտը, Մեծ դամբանը, Աղօթք:

Քերթուածը իր ամբողջութեամբ (19 մասերէ կը բաղկանայ) լոյս պիտի տես- նէ յորեկինական հրատարակութիւններու շարքին:

Ոսկի շողեր

Հանդէսի փակման, վանքի աշակերտ- ներու երգչախումբը լսելի կ'ընէր Միւթ- թար Արբայի հեղինակութիւններէն տաղ մը, «Գովեալ դասուցն հրեղինաց» սիրգ- ընաւորութեամբ, որ աւանդաբար հասած է մինչեւ մեր օրերը, ուրիշ չորս տաղե- րու եղանակներուն հետ:

Եղանակ մը՝ արեւելեան անոյշ գոյնե- րով, որ մեզ կը տանէր դէպի Սերաս- տիւ, Սեւան կամ Էջմիածին, քայլ առ քայլ հետեւելու վերածնունդի մեծ Առա- քելի ճիւղերուն եւ հսկայ քայլերուն:

Հանդիսատեսէն բաժնուելով, միա- բանները, կ'իջնէին պարտէզ, եւ զրեթէ ընաղդարար կ'ուղղուէին դէպի վանքի մայր դուռը. հոն կը հասնէր ծովը, ժա- մանակին. հոն՝ ճիշտ 250 տարի առաջ, այսպիսի ժամու մը, Միւթաթար Արբաճայր ոտք է դրած, իր առաջին աշակերտնե- րուն հետ: Սուրբ է տեղիս այս:

Այդ դրան մօտ՝ այժմ բարձրացած է Միւթաթարի մեծ անդրին:

Ու մենք կը հաւատանք որ Միւթա- թար հողին տակաւին ներկայ է մեր մէջ, ինչպէս ոսկի շողերը սա վերջալոյսին, որ կ'ոգոյշէ, 250 տարիէ ի վեր, վանքի կար- միր պատերը եւ բոլորիս հողինները:

Հ. Ն. Տ. Ն.

ՀԱՅՈՑ ԿՂԶԻՆ 250ԱՄԵԱԿԸ

(1717 - 1967)

Պ.

Հայոց կղզիին պատմութեան երրորդ շրջանը (1815-1883) կը բացուի նորօրի- նակ երեւոյթով. Սուրբ Ղազար կը մեծ- նա՛յ...:

1815ին, երբ արդէն տարիէ մը ի վեր աւստրիական զրօշը կը ծածանէր Վենե- տիկի մէջ, Սուրբ Ղազար այցելելու կու գայ Աւստրիոյ Ֆրանչիսկոս Ա. կայսրը, որ նկատելով կղզիին փոքրիկութիւնը, միւս կողմէ՝ նաեւ վանականներու գեղե- ցիկ ու արդիական ծրագրերը, կ'ար- տօնէ կղզիին ընդարձակումը: Քանի մը տարուան ընթացքին, Ս. Ղազար իր նախ- նական 7·876 քառ. մեզրէն՝ կը հասնի 13·720 քառ. մեզր տարածութեան: Նոր հողերը (աւերակներ, ցեխ ու տիղմ՝ հան- ուած Վենետիկի ջրանցքներէն) կ'երկա- րեն կղզին դէպի հիւսիս-արեւմուտք, դէ- պի Վենետիկ:

Ժպիտներ կը ծաղկին ժիր միաբաննե- րու զէմքերուն. հին եւ մեծ ծրագրերնե- րու իրադրութիւն ժամը կը հնչէ...:

Այսպիսի խանդավառ մթնոլորտի մէջ է որ Լորտ Պայրըն կ'այցելէ Ս. Ղազար, 1816ի ձմեռը, եւ Հայոց կղզիէն ողեւոր- ուած՝ կը սիրէ ամբողջ հայ ազգը, իր փա- ուած՝ կը սիրէ ամբողջ հայ ազգը, իր փա- ուած՝ կը սիրէ ամբողջ հայ ազգը, իր փա- ուած՝ կը սիրէ ամբողջ հայ ազգը:

Աւստրիոյ գահակալին օրինակը խթան կ'ըլլայ նաեւ հայազգի բարեկամներու, որոնք սիրալոյսով նուիրատուութիւննե- րով կ'օժտեն վանքը:

Շինարարական աշխատանքները կը սկսին դարձեալ եկեղեցիէն:

1816ին, Ս. Ղազարի եկեղեցին կ'ունե- նայ իր նոր աւագ խորանը, մարմարեայ քառասուն սարքաւորումով. կը բարե- զարգուի աւանդատունը՝ վիմատաշ խո- րանով, մարմարեայ յատակով, ընկոյզէ գեղեցիկ որմաստախտակներով ու դարան- ներով, բարերարութեամբ Աղեքսանդր Ղաւթեանի (որդի Ռաֆայէլ Ղաւթեա- նի):

Յաջորդ տարին, տեղի կ'ունենայ ամ- բողջ եկեղեցւոյն յատակի նորօրիւթիւ- նը (դաս եւ առանձն)՝ վարդապետ եւ ըս- պիտակ մեծազօր մարմարներով. նուի- րատուն կը կոչուի Յակոբ Աղա Սեղբո- սեան:

1823-25ի շրջանին, նոր հողամասին վը- րայ կը շինուի տպարանի նոր թեւը, որ հին վանքի հիւսիս-արեւմտեան անկիւնէն կ'երկարի դէպի Վենետիկ, 10, 50 մեզր լայնքով եւ 40 մեզր երկարութեամբ. վերնայարկը կը յատկացուի միաբանա- կան բնակարաններու եւ ընթերցասրահի: Ընդարձակ թեւը կ'աւարտի մեծ դահլի- ճով մը, 17,60×6,58 մ. մեծութեամբ, ու- րու ստորին մասը կը սահմանուի տպա- րանի զբքերու շտեմարանի, իսկ վերին յարկը՝ ընդարձակ դահլիճ մը եղած է սկզբնական շրջանին:

Յաջորդ տարիներուն՝ մեծ զարկ կը տրուի տպարանական գործիքներու սար- քաւորումին, ժամանակի լաւագոյն ար- տագրութիւններով:

1827ին, կը ձեւաւորուի վանքի ներքին



Ս. Ղազարի «Գիտութեանց եւ Արուեստից» քանդաքանդ

քանդակիւն պարտէզը, գեղարուեստական յատակադիւծով:

1832ին, Ս. Ղազարու զանգակատունը կ'օժտուի չորրորդ զանգակով մըն ալ, փոքրագոյն քան նախորդ երեք մեծերը:

1836ին սկիզբ կ'առնէ վանքի նոր հողամասին «առ ի շէզ» պարիսպին շինութիւնը. սկսելով արեւելեան կողմէն, կ'անցնին հիւսիսակողմ, հուսկ՝ վանքի առաջակողմը, ընդամէնը շուրջ 300 մեղր երկարութեամբ: Հիւսիս-արեւելեան անկիւնը կը կառուցուի գեղահայեաց ութանկիւն շինութեամբ մը, «belvedere», համբոյր տալու վեհապահան սքանչելի վերջալոյսներուն:

Վրայ կը հասնին 1848ի անկախութեան պայքարները, որոնց ընթացքին վանքը կ'անցնէ տաղանայի օրեր: Վանքի ժամանակագիրը կ'ըսէ. «Ի շնորհս իտալացւոյ՝ տուաք պետութեան քաղաքիս զնորաձոյլ մամուլն, որ այն ինչ հասեալ էր ի Փարիզէ (1848, Մարտ 4):

1863ին, լուսաւորութեան կազմը կը հասնի Ս. Ղազար, եւ 31 լուսաւորացիներ կը գեղեցուն վանքին զանազան կողմերը (միայն 13 հատ՝ տպարանին մէջ): Վանքի ժամանակագիրը կը յիշէ նաեւ թէ

Վենետիկի մէջ 1843ին է որ առաջին անգամ կը սկսի կազմի լուսավարութիւնը:

1863ին, վարժարանի բաժնին մէջ, քանդակով առաջին յարկի վրայ գտնուող ծովահայեաց պատշգամբ, կը վերածեն մեծ հանդիսարանի, եւ վրան ալ երկու սենեակներ կը կառուցանեն, ազնիւ նուիրատուութեամբ Պօղոս Պէյ Տիւղեանի:

Յաջորդ տարին, վանքի չորս ջրհորներէն դատ, արտեսեան ջրհոր մը կը բանան կղզիին հիւսիսակողմը, վարժարանի առջեւ:

1866ին վերջնականապէս կ'աւարտին բոլորածեւ նոր ձեռագրատան աշխատանքները: Այդ թուականներուն, Հայաստանի զանազան գաւառներէն, Պոլսէն եւ այլ տեղերէ հաւաքուած ձեռագիրներու թիւը բաւական աճած էր. զիտենք թէ անոնց թիւը, 1792ի շրջանին, հասած էր մեծ հարիւրի. իսկ այժմ, 1866ին, արդէն կրկնապատկուած էր այդ թիւը: Եւրոպական թանկարժէք հրատարակութիւններ հետզհետէ կը խոստեն Ս. Ղազար, եւ Մխիթարակերտ մեծ գրադարանը փոքր կու գայ: Կը ծրագրեն առանձին ձեռագրատուն մը կանգնել, վայելուչ գեղարդուծով: Ատոր կը յատկացուի ա-

ւանգատան վերի յարկը, զոր գեղեցիկ դուռով մը կը միացնեն մեծ գրադարանին հետ. շինութիւնները բուն սկսած են 1847ի Յուլիսի 8ին, «նպաստիւք Չելեպույն». կ'աւարտին 1862ին: Երեք տարի ետք՝ կը գեղեցուն նաեւ արուեստագեղարանները, կեդրոնն ունենալով Մխիթար Արքայօր կիսանդրին, իտալացի Ծապրիս արձանագործէն (1833, Հոռոմ): Վանքի նամակագիրները, այդ շրջանին, ձեռագիրները կ'անուանեն «սրբագիր, սրբազան գիրք», իսկ ձեռագրատունը՝ «սրբարան վայելչադարդ», եւ հպարտ են որ յաջողած են ստեղծել «արժանի սրբարան՝ պատուական եւ մեծազանձ սրբադրացն մերոց»:

1866ին, վանքի գործակալ-մատակարար կը կարգուի Հ. Մանուէլ Վ. Քաջունի, որ բազմաթիւ նորոգութիւններ կը կատարէ մինչեւ 1873 թուականը: աշխատանքն այնքան կ'եռայ այդ շրջանին, որ վանքի ձեռնարկարդ եւ կոյր միարան մը՝ Եղբայր Նիկողայոս, սովորութիւն է դարձուցած յաճախ կրկնելու՝ թէ ե՞րբ պիտի գազրի մուրճի ձայնը վանքին: Բայի տպարանի, խոհանոցի եւ առողջապայութեան կարեւոր նորոգութիւններէ, 1869-1875ի շրջանին՝ տեղի կ'ունենայ «Գիտութեանց եւ Արուեստից Թանգարան»ի կազմաւորումը, ներքին գեղակերտ յօրինումաճքն ու ճաշակաւոր կահաւորումը: Թանգարանի կը յատկացուի այն մեծ դըրահը՝ որ վանքի հիւսիս-արեւմտեան վերջին ծայրը կը կազմէր 1823-25 շինութեան, ու կը կոչուէր «Նոր Շէնք». ասոր կից կը կառուցուի աստղաբաշխական դիտարանի բարձր աշտարակը:

Նոյն թուականներուն տեղի կ'ունենայ նաեւ գերեզմանատան առաջին ընդարձակումը, եւ Մխիթարեան վաստակաւոր Հայրերու ոսկրներու փոխադրութիւնը՝ նոր դամբարանին մէջ:

1873ին, Փարիզէն կը հասնի նոր մեծ ժամացոյցը՝ վանքի զանգակատան համար:

Այսպէս, 1815ի հոգերու ընդարձակումէն ետք, չքեղ եկեղեցիին ու գործունեայ

տպարանին կից՝ վանքը կ'ունենայ նաեւ փառաւոր ձեռագրատուն, արուեստագեղարան եւ արժանավայել գերեզմանոց:

Միաժամանակ՝ մշակութապէս մեծ ծաղկումի շրջանն է ասիկա Հայոց կըզգիւն, Ազգերեաններէն Ալիշան երկարող:


Հայկազեան բառարանի հրատարակութեամբ (1836), Մխիթարեան տպարանի դարաւելուիւ կը բացուի. ու տարուէ տարի՝ լոյս կը տեսնեն մեծադիր եւ փոքրադիր մատենաշարները հայ հին գրականութեան, Եզնիկէն Շնորհալի, Բիւզանդէն Կիրակոս, պատմագրքեր, մարտիրոսագրութիւններ, ճառական ու մեկնողական, աստուածաբանական ու գրական երկեր, յաճախ անյայտ բնագիրներու հին թարգմանութիւններ, բառարաններ, դասական հեղինակութիւններու չքեղ հայացումներ, քարտէսներ, օրացոյցներ. մեծ Աւետիքեանին ու Ազգերեանին կը յաջորդեն Հիւրմիւլները, Ջախջախեան, Բազմապետներ:

1843 թուականէն առկին՝ վանքն ունի իր աշխարհաբար պարբերաթերթն ալ:

Մխիթարեան կաճառի գործունէութեան ոսկեղէն շրջանն է, որ դէպի Ս. Ղազար կ'առնինք՝ բացի ինքնակալներէ եւ իշխանագուններէ, նաեւ միջազգային համբաւի տէր՝ մշակոյթի մեծ տի: աններ, ամէն ազգէ. Տոնիճեթի, Ռոսսինի, Քանովա, Ալֆրէտ տը Միւսէ, Ժորժ Սանտ, Ամփեր, Ուոլթըր Սքոթ, Կրենթ, Կլետսթըն — թուելու համար լոկ քանի մը անուններ — Սուրբ Ղազարի ոսկեմատենանին մէջ մեծ դնահատանքով ու յարգանքով կը ստորագրեն իրենց անունները, Հայոց կղզիէն ճանչնալով ու սիրելով հայ ազգն ամբողջ:

Բայց աւա՛ղ... վանքի տարեկրութեան մէջ կ'արձանագրուի կրակի թուական մը:

1883 թուականի Յուլիս 14ի գիշերը՝ անակնկալ հրդեհ մը կու գայ խոռովել վանքին անդորրն ու խանդավառ կեանքը: Ու կը ծաղի Վարդապետի տիւրը արչալոյսը՝ Հայոց կղզիին մոխիրներուն, խանձոցներուն եւ ծուխերուն վրայ:



Յ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ - Լորիտ Պայրըն կը ժամանէ Ս. Ղազար:

Հրդեհը տեղի էր ունեցած կղզիին ա-
րեւմտեան կողմը, սկիզբ առնելով ձե-
ղունէն: Բարեբախտաբար, գրադարան ու
ձեռագրատուն հեռու կը գտնուէին կրա-
կավայրէն, նմանապէս տպարանը՝ իր
չտեմարանով: Սակայն, երբ բոցերը կը
սկսին ուղղուել դէպի հարաւ, դէպի դե-
ւանատան կողմը, վարդապետներէն յան-
դընագոյններ՝ քաջութեամբ՝ կրակնե-
րուն մէջէն կը սուրան դէպի երկրորդ
յարկ, ու կը յաջողին դիւանի չորս պա-
տուհաններէն պարտէզ նետել բոլոր հա-
ւաքածոն, վերելելով ամբողջովին, թէպէտ
ամէն ինչ ցանցիւր ու խառնակուած: Ազա-
տարները հազիւ կը յաջողին վերա-
դառնալ, ողջ մնացած միակ սանդուղէն:
Կը հասնին քաղաքէն հրէջներ եւ կը
սահմանափակեն կրակը. վանքի ջրհոր-
ներն անբաւական դալով՝ կ'օգտագոր-
ծուի ծովուն ջուրը. վանարեակ միաբան-
ներն ու աշակերտներն ալ այն դիշեր կը
զառնան հրէջ. վերջապէս առտուան դէմ
կը մարի կրակը. սակայն աղաջուրը կ'ո-
ղողէ վանքին արեւմտեան որմերը, եւ
վայրագաւթիքները անդամ մը եւս կը ծո-

վանան. հինգ օր կը տեւէ ընդհանուր մա-
քրութեան աշխատանքը, որմէ ետք կը
սկսի որմնադիրներու գործը: Շէնքերու
արեւմտակողմեան երկար թեւին կեղրո-
նական մասն էր խորտակուած, Արրահօր
սենեակէն մինչեւ Նորրնծայարան երկա-
րող սրահը՝ իր յարակից սենեակներով,
յատկապէս վերի յարկը եւ ձեղունը:

Լուրը վենետիկէն, լափիկոյ բոցերէն
արագ՝ կը հասնի արտասահման. բազ-
մաթիւ ազգայիներ կը փութան ո՛չ մի-
այն այցելել կամ ցաւակցութեան նամակ-
ներ հասցնել, այլ նաեւ ազնիւ նուիրաւոր-
ութիւններով քաջայերել Միաբանու-
թիւնը՝ մինչեւ իսկ հեռաւոր Զուլայէն,
Մոսկուայէն, Թիֆլիսէն, Զմիւռնիայէն,
Ճաւայէն ու Սինկափորէն: Անդլիայի ու
ամերիկացի բարեկամներ, Լորտեր եւ
Հիւպատոսներ, հանդանակութիւն կը
սարքեն՝ վերականգնելու համար Հայոց
կղզին, զոր իրենք կը սիրեն կոչել նաեւ
Լորտ Պայրընի կղզի:

(Շար. 4)

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԵՓԵՍՈՍԻ ԺՈՂՈՎՔԻ ԵՒ ԱՆՈՐ ՅԱԶՈՐԴՈՂ ԴԵՊՔԵՐՈՒ ԱՐՁԱԳԱՆԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

(Շար. տե՛ս «Բազմավէպ» 1967, ք. 3-5, էջ 58)

ԱԿԱԿ ՄԵՆԻՏԻՆԵՒԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ ԱՌ. ՀԱՅՍ

«Գիրք Թղթոց»ի մէջ, Ակակ Եպիսկո-
պոս երկրորդ նամակ մըն ալ ունի՝ ուղ-
ղուած Հայոց Նախարարներուն¹³: Նա-
մակին գրութեան շարժառիթը եղած է
Հայաստանէն եկած երեք երէցներու (Հո-
նայ, Քոթայ եւ Անճնայ) բերած բարի
լուրը, թէ Հայ Նախարարները «կապեր ու
կնքեր» են Դիոգորի գրքերը: Ասկէ առիթ
առած, Ակակ կը յանձնարարէ Հայ Նա-
խարարներուն՝ որ չխաբուին ո՛չ մէկէն,
եւ թոյլ չտան որ յիշեալ գրքերը մէկու
մը ձեռքը անցնին. քանի որ, կը գրէ ան,
Նեստոր դատապարտուեցաւ բոլոր եկե-
ղեցիներէն, ուրեմն՝ ո՛րքան աւելի Դիո-
գորի գիրքն ու վարդապետութիւնը պէտք
է մերժուի, որ նոյն միտքն ու վնասակա-
րութիւնը ունի¹⁴: Ան կը վախճայ որ Նես-
տորի եւ Դիոգորի (կամ Թէոգորի) հետե-
ւորդները, որոնք մինչեւ Հայաստան ե-
կած են՝ քարոզչական նպատակով, յաջո-
ղին խաբել եւ մտքերը պղտորել. ուստի,
իր պարտականութիւնը կը համարի լուռ
չմնալ եւ օգնել անմեղ մարդոց, յիշեցնե-
լով անոնց՝ Նիկիոյ Ս. Ժողովքին մէջ
հաստատուած ճշմարիտ հաւատքը, զոր
ամէն օր եկեղեցիներու մէջ կ'արտասա-
նեն, եւ այդ հաւատքով կամ հանգանա-
կով կը մկրտեն բոլոր եկեղեցիներու մէջ
մկրտութեան եկողները՝ մինչեւ Նեստո-
րի եւ Դիոգորի յայտնուելը: Նոյն հա-

ւատքը հաստատուեցաւ, կ'ըսէ ան, Եփե-
սոսի Ժողովքին մէջ ալ, ուր Նեստոր եւ
ուրիշներ չյաջողեցան իրենց տեսակէտին
յաղթանակել տալ¹⁵:

Թէեւ Ակակի այս երկրորդ նամակը
ուղղուած է Ս. Սահակի եւ Ս. Մեսրո-
պի, այլ Հայ Նախարարներուն, եւ այդ
իսկ պատճառով՝ մեր նիւթէն դուրս կըր-
նար նկատուիլ, սակայն դուրի չէ ո՛րեւէ
առնչութիւն ունենալէ յիշեալ երկու
սուրբերու կեանքին եւ մեր ուսումնասի-
րած չըջանին հետ. որովհետեւ նամակը
ուսումնասիրողներու մօտ այն դադափա-
րը ձեւացած է՝ թէ Ակակ զայն կ'ուղղէ
Հայ Նախարարներուն, զի ուշանալով Ս.
Սահակէն եւ Ս. Մեսրոպէն:

Այս կարծիքին դուռ բացած է եւրոպա-
ցի ուսումնասէր մը, M. Richard, որ
կատկած յարուցանելով կը հարցնէ. «Կա-

13. Թուղթ յԱկակայ Եպիսկոպոսէ ի Հայս, «Գիրք
Թղթոց», էջ 19-21:

14. «Ջայս հարկեցայ գրել առ սէր ձեր, զի ի գալ
առ մեզ սիրելեաց մերոց երեցանց, Հոնայ,
Քոթայ եւ Անճնայ, պատմել մեզ զբարի
գործսն, զոր գործեցէք, զի զգրեալսն Դիո-
գորի կապեցէք կնքեցէք: Արդ, մի՛ ոք հաւա-
նեցուցէ զձեզ տալ անդրէն զայնոսիկ, որք
փութով եւ ախորժելով ստանան զայն ի կոր-
ծանումն ստացողաց նոցա եւ լսողաց: Զի ե-
թէ Նեստորիս վերացաւ յամենայն եկեղեց-
եաց, զիա՞րդ Դիոգորն, զիրքն եւ խումն (ու-
սումն) ընդունելի իցէ, որք զնոյն միտս եւ ըզ-
վնասակարութիւն ունին». Գ. Թ. էջ 21:

15. Գ. Թ. էջ 19-20: